

# ՄՐՑՈՒՅԹ | 2024 ՕԳՈՍՏՈՍ | ԱՌԱՋԻՆ ՓՈԼ

## ՄՐՑՈՒՅԹԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

1	Հայտարարվում է 2024 թվականի օգոստոսի «ՍՏԵՄ Արմենիա» մրցույթի առաջին փուլը: Երեք քննադատական մտածողության հարցեր պետք է լուծվեն ինը ժամվա ընթացքում:
2	Մրցույթին կարող են մասնակցել Հայաստանի միջին եւ ավագ դպրոցներում, ինչպես նաեւ քոլեջներում սովորող 13-18 տարեկան բոլոր աշակերտները:
3	Առաջադրանքները կիրառարակվեն առցանց STEMarmenia.org հարթակում շաբաթ օրը՝ օգոստոսի 3-ին ժամը 9:00-ին, որպես PDF փաստաթուղթ: Լուծումները պետք է ներկայացվեն մինչև նույն օրվա ժամը 18:00-ը՝ լրացնելով անհատական տվյալները և լուծումները նույն փաստաթղթում:
4	Լրացված PDF ֆայլը հարկավոր է ուղարկել contests@stemarmenia.org էլ. հասցեին: Էլ.փոստի թեմայի տողը պետք է պարունակի հետևյալ տեքստը՝ «ՍՏԵՄ Արմենիա մրցույթ - 2024 օգոստոս, #Աշակերտի անունը, ազգանուն, մարզ#»:
5	Հայտերը երկու օրվա ընթացքում կգնահատվեն «ՍՏԵՄ Արմենիա» ՀՀ մրցութային հանձնաժողովի կողմից: Առաջին փուլում կընտրվեն մինչև տասը հաղթող՝ հիմնված ճիշտ պատասխանների քանակի վրա, իսկ հավասար միավորների դեպքում՝ ով ներկայացրել է ավելի վաղ:
6	Երևանից և մարզերից հայտերը կդիտարկվեն առանձին՝ մինչև հինգ հաղթող հայտ երևանից և հինգը բոլոր մարզերից միասին:
7	Մրցույթն անվավեր է համարվում հինգից պակաս հայտերի ներկայացման դեպքում:
8	Առաջին փուլի հաղթողների անունները կիրառարակվեն STEMarmenia.org հարթակում օգոստոսի 6-ին:
9	Առաջին փուլի հաղթողները կանցնեն երկրորդ, եզրափակիչ փուլ, որտեղ որոշակի թեմայով պետք է պատրաստվի համակարգչային ներկայացում, որի մասին կհայտարարվի առաջին փուլից հետո: Ներկայացումները կիրառարակվեն STEMarmenia.org հարթակում և երեք լավագույն հայտերը կընտրվեն որպես մրցույթի հաղթողներ:
10	Մրցույթի հաղթողների համար սահմանվում է դրամական պարգևներ՝ 1-ին տեղ - 120.000 ՀՀ դրամ 2-րդ տեղ - 80.000 ՀՀ դրամ 3-րդ տեղ - 50.000 ՀՀ դրամ:

## ՀԱՅՏԻ ՁԵՎ

Խնդրում ենք ուշադիր լրացնել այս ձեւը, քանի որ առանց ճիշտ տեղեկությունների հայտերը չեն ընդունվի: Դաշտերը լրացվող են, այնպես որ դուք կարող եք մուտքագրել պահանջվող տեղեկությունները ցանկացած PDF ընթերցողի կամ հեռախոսի հավելվածում: Էլեկտրոնային փոստով ուղարկեք ֆայլը հետեւյալ հասցեով՝ [contests@stemarmenia.org](mailto:contests@stemarmenia.org): Եթե Էլեկտրոնային փոստով չեք օգտվում, օգնություն խնդրեք մեծահասակից: Ստուգեք ֆայլը ուղարկելուց առաջ՝ համոզվելու համար, որ ամեն ինչ ճիշտ է:

Անուն	
Ազգանուն	
Մարզ	
Քաղաք կամ գյուղ	
Ուսումնական հաստատության անվանումը	
Տարիքը և դասարանը	
Ծնողի կամ խնամակալի անունը և ազգանունը	
Ծնողի կամ խնամակալի հեռախոսահամարը	



ԱՌԱՋԱՂՐԱՆՔ #2

ՃԱՆԱԶԵՆՔ ՄԵՐ ԵՐԿԻՐԸ

Անվանեք այս աշխարհագրական «թռչունի» մոտ գտնվող լիճը: Այն գտնվում է ներքևում պատկերված վանքից 18,8 կմ հեռավորության վրա:



Պատասխան	
----------	--

## ԱՌԱՋԱԴՐԱՆՔ #3

### ՄՏԱԾԵՆՔ ՏՐԱՄԱԲԱՆՈՐԵՆ

Չորս ընկերներ՝ Մարգարյանը, Մարկոսյանը, Մարտիկյանը և Մարտիրոսյանը, յուրաքանչյուրն ունի մեկ դուստր, սրճարան և ռեստորան: Ընկերներից յուրաքանչյուրը իր երկու բիզնեսն անվանել է մյուս երեք ընկերների երկու տարբեր դուստրերի անուններով: Կրկնօրինակ անուններ չկան ինչպես չորս սրճարանների միջև, այնպես էլ չորս ռեստորանների միջև: Օգտագործելով հետևյալ պնդումները՝ պարզեք, թե ով է չորս ընկերներից յուրաքանչյուրի դուստրը (մեկ դուստրի անունը Մարինե է), և որոնք են յուրաքանչյուր սեփականատիրոջ բիզնեսների անունները:

- 1) Մարտիրոսյանի ռեստորանը կրում է այն սեփականատիրոջ դստեր անունը, որի անունով նույնպես կոչվում է Մարգարյանի սրճարանը:
- 2) Ո՛չ Մանուշակ Մարգարյանը, ո՛չ Մարիամ Մարտիրոսյանը պաղպաղակ չեն սիրում:
- 3) Մարտիրոսյանի սրճարանը կրում է այն սեփականատիրոջ դստեր անունը, ում ռեստորանը կոչվում է Մանուշակ:
- 4) Մարտիկյանի ռեստորանը, որի անունը Մարգարիտա չէ, կրում է այն սեփականատիրոջ դստեր անունը, ում սրճարանը կոչվում է Մարիամ:
- 5) Մարկոսյանի ռեստորանը ոչ Մարիամ է կոչվում, ոչ էլ նրա սրճարանը՝ Մանուշակ:

#### Պատասխան

ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐ	ԴՈՒՍՏՐ	ՍՐՃԱՐԱՆ	ՌԵՍՏՈՐԱՆ
Մարգարյան			
Մարկոսյան			
Մարտիկյան			
Մարտիրոսյան			

\*Ուղարկելով այս հայտը՝ դուք երաշխավորում եք, որ դուք հանդիսանում եք ներկայացված աշխատանքի կամ լուծումների հեղինակը: Խախտում բացահայտելու դեպքում մասնակիցը կարող է որակազրկվել:

**Հաջողություն!**